ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/88

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մեր Անանյանս, քննելով «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ի կողմից 19.10.2018թ. ներկայացված բողոքը և «Քարավան» ՍՊԸ-ի կողմից 27.10.2018թ. ներկայացված համանման բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/88 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 19.10.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ32+700-կմ36+000 աջակողմյան հատվածի, Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ35+500- կմ40+100 ձախակողմյան

հատվածի, Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ64+174-կմ67+150 աջակողմյան և ձախակողմյան հատվածների, Մ-10 Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ57+100-կմ64+500 հատվածի և Մ-14, Մ-4-Շորժա-Վարդենիս միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ12+450-կմ19+450հատվածի միջին նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/20Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի (այսուհետ՝ Ընթացակարգ) 4-րդ չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ն և «Քարավան» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.10.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ի հայտը համապատասխանում է նույն հրավերի պահանջներին, իսկ «Քարավան» ՍՊԸ-ի հայտը չի համապատասխանում նույն հրավերի պահանջներին, քանի որ վերջինիս գնային առաջարկում սխալ է հաշվարկվել ԱԱՀ-ի գումարը և բացի դրանից «Քարավան» ՍՊԸ-ն ներկայացրել է ԼՂՀ քաղաքաշինության նախարարության կողմից տրված լիցենզիա, այն դեպքում, երբ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ շինարարության իրականացումը համարվում է լիցենզավորվող գործունեություն, իսկ քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման գործունեության կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին ՀՀ կառավարության N 777-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ ճանապարհաշինական և տրանսպորտային օգյեկտների շինարարության բնագավառում պահանջվում է ՀՀ-ում տրված քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման լիցենզիա՝ ըստ տրանսպորտային ոլորտի:

Նույն արձանագրության 3-րդ կետի «բ» ենթակետով գնահատող հանձնաժողովը որոշել է «Քարավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում գնային առաջարկի մասով պարզաբանում ստանալու համար դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն, իսկ ներկայացված լիցենզիայի մասով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետը, առաջարկել «Քարավան» ՍՊԸ-ին շտկելու արձանագրված անհամապատասխանությունը:

Հանձնաժողովը 19.10.2018թ. թվագրված նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով ընդունել է ի գիտություն, որ «Քարավան» ՍՊԸ-ի կողմից շտկվել է արձանագրված անհամապատասխանությունը: Նույն արձանագրության 2-րդ կետի «ա» ենթակետով հանձնաժողովը որոշել է 4-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Քարավան» ՍՊԸ-ին:

Ընկերությունն իր կողմից ներկայացված գնային առաջարկով ճանաչվել է Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից:

Ընկերությունը հայտնել է, որ բողոքը ներկայացնելու օրվա՝ 18.10.2018թ. դրությամբ www.gnumner.am պաշտոնական կայքում հրապարակված «ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/20Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը թվագրված է 19.10.2018թ., ինչն առնվազն անհասկանալի է:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասը, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետը, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6.1-րդ մասը, Կարգի 41-րդ կետը:

Ընթացակարգի հրավերի ներածական մասում սահմանվել է, որ սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից «Քարավան» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և վերջինիս 4-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը իրավաչափ չէ և կայացվել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի խախտումով, քանի որ «Քարավան» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված լիցենզիան չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին: Ընկերությունը գտնում է, որ հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի «բ» ենթակետով արձանագրված անհամապատասխանության շտկում կարող է համարվել բացառապես «Քարավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6.1-րդ մասի համաձայն ԼՂՀ կողմից տրված համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում նույն օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու իրավասությունն ամրագրող՝ ՀՀ կառավարության որոշումը, ինչը տվյալ դեպքում մասնակցի կողմից չի իրականացվել,

քանի որ նման որոշում գոյություն չունի, հետևաբար վերջինիս հայտում արձանագրված անհամանապատասխանությունը չի կարող համարվել շտկված:

Ընկերությունը բողոքով խնդրել է պարտավորեցնել՝

1. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել «Քարավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի պահանջներին համապատասխանող գնահատելու և վերջինիս ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ ընդունել «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ին ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին համապատասխան որոշում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.10.2018թ. ժամը 10:15-ին և 30.10.2018թ. ժամը 11:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Քարավան» ՍՊԸ-ի կողմից համանման բողոքով ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 23.10.2018թ. միջանկյալ որոշմամբ «Քարավան» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպություն) բողոքի քննությանն ներգրավվել է որպես երրորդ կողմ: Միևնույն ժամանակ «Քարավան» ՍՊԸ-ն 27.10.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է համանման բողոք:

Կազմակերպությունը համանման բողոքով հայտնել է հետևյալը.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 02.10.2018թ. թիվ 2 արձանագրության 2-րդ կետի «բ» ենթակետի երկրորդ պարբերության համաձայն՝ հանձնաժողովը արձանագրել է, որ «Քարավան» ՍՊԸ-ի հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ գնային առաջարկում սխալ է հաշվարկվել ԱԱՀ-ի գումարը և «Քարավան» ՍՊԸ-ն ներկայացրել է ԼՂՀ քաղաքաշինության նախարարության կողմից տրված քաղաքաշինության բնագավառում շինարարության

իրականացման գործունեության լիցենզիա, այն դեպքում, երբ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ շինարարության իրականացումը հանդիսանում է լիցենզավորվող գործունեություն, իսկ քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (բացառությամբ շիանարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով հաստատված աղյուսակի 17-րդ բաժնի 2-րդ կետով նախատեսված այլ դեպքերի) գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին ՀՀ կառավարության 02.06.2009թ. N 777 կառավարության որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ ճանապարհաշինական և տրանսպորտային օբյեկտների շիանարարության բնագա-վառում պահանջվում է ՀՀ-ում տրված քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման լիցենզիա՝ ըստ տրանսպորտային ոլորտի:

Նույն արձանագրության 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է «Քարավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում գնային առաջարկի մասով պարզաբանում ստանալու համար դիմել ՀՀ ՖՆ, իսկ ներկայացված լիցենզիայի մասով՝ հիմք ընդունել կարգի 41-րդ կետը՝ առաջարկել «Քարավան» ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.10.2018թ. թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ արձանագրել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվել է պարզաբանումը, իսկ «Քարավան» ՍՊԸ-ի կողմից շտկվել է արձանագրված անհամապատասխանությունը: Նույն արձանագրության 2-րդ կետի «ա» ենթակետով Հանձնաժողովը որոշել է 4-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Քարավան» ՍՊԸ-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների գործընթացի կարգավորումը և համակարգումն իրականացնում է լիազորված մարմինը (ՀՀ ֆինանսների նախարարությունը):

Նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ լիազորված մարմինը պատվիրատուներին մեթոդական օժանդակություն է ցուցաբերում գնումների գործի կազմակերպման հարցում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացին կազմակերպման մասին» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6.1 մասի համաձայն՝ օտարերկրյա իրավաբանական անձինք օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեություն կարող են իրականացնել օտարերկրյա պետությունների տված համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում՝ ՀՀ կառավարության որոշման հիման վրա:

Ըստ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ «Քարավան» ՍՊԸ-ի հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ «Քարավան» ՍՊԸ-ն ներկայացրել է ԼՂՀ քաղաքաշինության նախարարության կողմից տրված լիցենզիա ...:

Վերոնշված խնդրի վերաբերյալ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը 05.10.2018թ. հարցում էր ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարություն, որին ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարությունը ներկայացրել է հետևյալ դիրքորոշումը. «Ուսումնասիրելով վերոնշյալ գրությունը՝ հայտնում ենք, որ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի համաձայն՝ մասնակիցների հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ նույն օրենսդրությամբ և հրավերով սահմանված կարգով: Միաժամանակ հայտնում ենք,

որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6.1 մասի համաձայն՝ օտարերկրյա իրավաբանական անձինք օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեություն կարող են իրականացնել օտարերկրյա պետությունների տված համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում՝ ՀՀ կառավարության որոշման հիման վրա: Այս կապակցությամբ գտնում ենք, որ օտարերկրյա պետության տարածքում ստացված լիցենզիան ՀՀ տարածքում կիրառելու թույլտվություն ստանալու ընթացակարգը պետք է նախաձեռնել «Քարավան» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու դեպքում՝ աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգելով ՀՀ կառավարություն որոշումը ընդունելու համար դիմելու և ընդունվելու միջև ընկած ժամկետով»:

Վերոնշվածից ուղղակիորեն հետևում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Քարավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ԼՂՀ քաղաքաշինության նախարարության կողմից տրված լիցենզիայի մասով արձանագրված անհամապատասխանությունը և որպես հետևանք նաև նշված անհամապատասխանությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել տալու մասին կայացրած որոշումն անհիմն է և ոչ իրավաչափ է, քանզի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ոչ թե պետք է հիմք ընդուներ Կարգի 41-րդ կետը և Կազմակերպությանը տար շտկելու հնարավորություն «Քարավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ԼՂՀ քաղաքաշինության նախարարության կողմից տրված լիցենզիայի մասով, այլ հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6.1 մասի պահանջները՝ «Քարավան» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու դեպքում պետք է ՀՀ տարածքում կիրառելու թույլտվություն ստանալու ընթացակարգը նախաձեռներ:

Հենց այս տեսանկյունից Կազմակերպությունը գտնում է, որ «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ի կողմից 19.10.2018թ. ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ, ի սկզբանե, ոչ իրավաչափ է գնահատող հանձնաժողովի կողմից «Քարավան» ՍՊԸ-ին ուղղված վերջինիս կողմից ներկայացված ԼՂՀ քաղաքաշինության նախարարության կողմից տրված լիցենզիայի մասով շտկում կատարելու պահանջը, ուստի և նման

պայմաններում չի կարող քննարկման առարկա դարձվել Ընկերության կողմից շտկում կատարելու փաստի հավաստիությունը և հիմնավորվածությունը:

Ավելին, ինչպես հետևում է ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումից՝ լիցենզիայի հետ կապված հարցը (և նաև ՀՀ տարածքում կիրառելու թույլտվություն ստանալու ընթացակարգ նախաձեռնելը) արդիական է դառնում միայն «Քարավան» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու դեպքում:

«Քարավան» ՍՊԸ-ն համանման բողոքով խնդրել է նախ մերժել «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ի կողմից 19.10.2018թ. ներկայացված բողոքը, ինչպես նաև՝

1. Դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.10.2018թ. թիվ 2 արձանագրության 2-րդ կետի «բ» ենթակետի երկրորդ պարբերությամբ կայացված որոշումը՝ ներկայացված ԼՂՀ քաղաքաշինության նախարարության կողմից տրված լիցենզիայի մասով «Քարավան» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին անհամապատասխան գնահատելու վերաբերյալ:

2. Դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 02.10.2018թ. թիվ 2 արձանագրության 3-րդ կետի «բ» ենթակետով կայացված որոշումը՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն «Քարավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված լիցենզիայի մասով արձանագրված անհամապատասխանությունը շտկելու պահանջ ներկայացնելու վերաբերյալ:

3. Համապատասխանաբար դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.10.2018թ. թիվ 3 արձանագրության 1-ին կետով կայացված որոշումը՝ «Քարավան» ՍՊԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

«Քարավան» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.10.2018թ. ժամը 10:15-ին և 30.10.2018թ. ժամը 11:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է համանման բողոքով ներկայացված դիրքորոշումը:

3. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.10.2018թ. ժամը 10:15-ին և 30.10.2018թ. ժամը 11:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 23.10.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ «Քարավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի մեջ ԱԱՀ-ի գումարը կլորացվել է: Պատվիրատուն համապատասխան հարցում է ներկայացրել լիազորված մարմնին վերոհիշյալ հարցի կապակցությամբ, որին ի պատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ գնային առաջարկների համեմատումն իրականացվում է առանց ԱԱՀ-ի գումարի հաշվարկման:

Հրավերով պահանջվել է տրանսպորտի բնագավառի լիցենզիա: «Քարավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ԼՂՀ-ի կողմից տրված տրանսպորտի բնագավառի լիզենցիա: Գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը և պարզաբանում խնդրել ընկերությունից: Վերջինս ներկայացրել է պարզաբանում՝ հղում կատարելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածին: Պատվիրատուն համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտե և ՀՀ ֆինանսների նախարարություն: Ստացված պատասխանները հիմք ընդունելով՝ գնահատող հանձնաժողովը «Քարավան» ՍՊԸ-ի հայտը գնահատել է հրավերի պահանջներին համապատասխանող:

4. ԳԲԽ-ԱՄ-2018/88 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԽ-ԱՄ-2018/88 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ32+700-կմ36+000 աջակողմյան հատվածի, Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ35+500- կմ40+100 ձախակողմյան հատվածի, Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ64+174-կմ67+150 աջակողմյան և ձախակողմյան հատվածների, Մ-10 Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ57+100-կմ64+500 հատվածի և Մ-14, Մ-4-Շորժա-Վարդենիս միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ12+450-կմ19+450հատվածի միջին նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/20Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Քարավան» և «Շանթ-Սեյրան» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի հրավերով 1-5-րդ չափաբաժինների համար պահանջվել է քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման տրանսպորտային ոլորտի լիցենզիա:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.10.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ «Քարավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի գնային առաջարկում սխալ է հաշվարկված ԱԱՀ-ի գումարը, ինչպես նաև մասնակիցը ներկայացրել է ԼՂՀ քաղաքաշինության նախարարության կողմից տրված քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման գործունեության լիցենզիա, այն դեպքում երբ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ շինարարության իրականացումը հանդիսանում է լիցենզավորվող գործունեություն, իսկ քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով հաստատված աղյուսակի 17-րդ բաժնի 2-րդ կետով նախատեսված այլ դեպքերի) գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին ՀՀ կառավարության 02.07.2009թ. N 777

որոշմամբ հաստատված կարգի համաձայն ճանապարհաշինական և տրանսպորտային օբյեկտների շինարարության բնագավառում պահանջվում է Հայաստանի Հանրապետությունում տրված քաղաքաշինության բնագավառում շինարարության լիցենզիա ըստ տրանսպորտային ոլորտի:

Նույն արձանագրության համաձայն, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, որոշվել է «Քարավան» ՍՊԸ-ին առաջարկել լիցենզիայի մասով շտկել արձանագրված անհամապատասխանությունը, իսկ լիազոր մարմին ներկայացնել համապատասխան հարցում՝ պարզաբանում ստանալու նպատակով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.10.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվել է համապատասխան պարզաբանումը, իսկ «Քարավան» ՍՊԸ-ի կողմից շտկվել է արձանագրված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն որոշմամբ «Քարավան» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ի 19.10.2018թ. բողոքը, «Քարավան» ՍՊԸ-ի կողմից 27.10.2018թ. ներկայացված համանման բողոքը, «ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/20Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6.1-րդ մասի համաձայն՝ օտարերկրյա իրավաբանական անձինք Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող են իրականացնել սույն օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեություն օտարերկրյա պետությունների տված համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:

Նույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շինարարության իրականացումը (բացառությամբ նույն հոդվածում նախատեսված դեպքերի) համարվում է լիցենզավորման ենթակա գործունեություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝ հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը:***

Կարգի 41-րդ և 42-րդ կետերի համաձայն՝

41. Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար ավտոճանապարհների նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/20Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերով նախատեսվել է, որ 1-5-րդ չափաբաժինների համար պահանջվում է քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման ***տրանսպորտային ոլորտի լիցենզիա:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 6-րդ պարբերության համաձայն՝ ***մասնակիցը հայտով ներկայացնում է սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը:***

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Քարավան» ՍՊԸ-ն, որն Ընթացակարգին մասնակցելու դիմումի համաձայն՝ հանդիսանում է Արցախի Հանրապետության ռեզիդենտ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.10.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ «Քարավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ԼՂՀ քաղաքաշինության նախարարության կողմից տրված քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման գործունեության լիցենզիա, մինչդեռ ճանապարհաշինական և տրանսպորտային օբյեկտների շինարարության բնագավառում պահանջվում է Հայաստանի Հանրապետությունում տրված քաղաքաշինության բնագավառում շինարարության լիցենզիա ըստ տրանսպորտային ոլորտի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, ծանուցել է «Քարավան» ՍՊԸ-ին, առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Պատվիրատուն միևնույն ժամանակ 04.10.2018թ. թիվ 08/15.3/15869-18 և 05.10.2018թ. թիվ 05/15.3/15969-18 գրություններով դիմել է համապատասխանաբար ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեին և ՀՀ ֆինանսների նախարարությանը՝

«Քարավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված լիցենզիայի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով:

Ի պատասխան Պատվիրատուի վերոհիշյալ գրության՝ ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեն համապատասխան գրությամբ հայտնել է, որ կոնկրետ ծրագրի շրջանակներում ՀՀ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց (տվյալ դեպքում՝ «Քարավան» ՍՊԸ-ն) անհրաժեշտ է ՀՀ կառավարության համապատասխան որոշում՝ համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6.1-րդ մասի: ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակվում և ներկայացվում է շահագրգիռ գերատեսչության (որը հանդիսանում է որպես պատվիրատու) կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարությունն, իր հերթին Պատվիրատուին ուղղված համապատասխան գրությամբ հայտնել է, որ օտարերկրյա պետության տարածքում ստացված լիցենզիան ՀՀ տարածքում կիառելու թույլտվություն ստանալու ընթացակարգը պետք է նախաձեռնել «Քարավան» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու դեպքում՝ աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգելով ՀՀ կառավարության որոշումն ընդունելու համար դիմելու և ընդունվելու միջև ընկած ժամկետով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.10.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվել է համապատասխան պարզաբանումը, իսկ «Քարավան» ՍՊԸ-ի կողմից շտկվել է արձանագրված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն որոշմամբ «Քարավան» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով:

Ուսումնասիրելով «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ի բողոքը և «Քարավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքը, գտնում եմ, որ «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է, իսկ «Քարավան» ՍՊԸ-ի համանման բողոքն՝ անհիմն է և ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից կազմակերպված «ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/20Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով նախատեսվել է, որ 1-5-րդ չափաբաժինների համար պահանջվում է քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման ***տրանսպորտային ոլորտի լիցենզիա:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 6-րդ պարբերության համաձայն՝ ***մասնակիցը հայտով ներկայացնում է սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը:***

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Քարավան» ՍՊԸ-ն, հանդիսանալով ոչ ՀՀ ռեզիդենտ, հայտով ներկայացրել է ԼՂՀ քաղաքաշինության նախարարության կողմից տրված քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման գործունեության տրանսպորտային ոլորտի լիցենզիա:

Այս տեսանկյունից հարկ է նկատել, որ ՀՀ կառավարության 02.07.2009թ. N 777-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 6-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ լիցենզիայի ներդիրները տրամադրվում են ըստ հետևյալ ոլորտների՝ տրանսպորտային:

Նույն հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ անձը սույն կարգի 6-րդ կետով սահմանված ցանկացած ոլորտում կարող է զբաղվել շինարարության իրականացման գործունեությամբ, եթե նա ստացել է շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով հաստատված աղյուսակի 17-րդ բաժնի 2-րդ կետով նախատեսված այլ դեպքերի) գործունեության լիցենզիա և լիցենզիային կից համապատասխան ոլորտի աշխատանքներ իրականացնող պատասխանատու անձի (անձանց) լիցենզիայի ներդիր (ներդիրներ):

Նույն հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների և

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով հաստատված աղյուսակի 17-րդ բաժնի 2-րդ կետով նախատեսված այլ դեպքերի) գործունեության լիցենզավորման և լիցենզիային կից՝ սույն կարգի 6-րդ կետով սահմանված համապատասխան ոլորտի (ոլորտների) ներդիրի (ներդիրների) տրամադրման հարաբերությունները կանոնակարգվում են «Լիցենզավորման մասին», «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կարգով և այլ իրավական ակտերով:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 6-րդ պարբերությամբ սահմանվել է ***մասնակցի կողմից հայտով՝ հրավերով նախատեսված տրանսպորտային ոլորտի լիցենզիայի (ներդիրի) պատճենը ներկայացնելու պահանջը: Ընդ որում մասնակցի կողմից պետք է ներկայացվի «Լիցենզավորման մասին», «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, ՀՀ կառավարության 02.07.2009թ. N 777-Ն որոշմամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով տրամադրված համապատասխան ոլորտի լիցենզիա:***

Միևնույն ժամանակ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6.1-րդ մասը կարգավորում է նաև օտարերկրյա իրավաբանական անձանց կողմից նույն օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեությունը իրականացնելու իրավական հնարավորությունը. այն է՝ օտարերկրյա իրավաբանական անձինք ***Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ*** կարող են իրականացնել սույն օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեություն օտարերկրյա պետությունների տված համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:

Արձանագրում եմ, որ «Քարավան» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերությամբ, Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 6-րդ պարբերությամբ սահմանված կարգով, հայտով չի ներկայացվել Ընթացակարգի հրավերով պահանջվող «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տրամադրված տրանսպորտային ոլորտի լիցենզիա (այն է՝ բացակայում է ԼՂՀ քաղաքաշինության նախարարության կողմից տրված լիցենզիայի հիման վրա «Քարավան» ՍՊԸ-ին լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու

վերաբերյալ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6.1-րդ մասի համաձայն ընդունված ՀՀ կառավարության համապատասխան որոշումը): Ընդ որում՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Կարգի 41-րդ կետի համաձայն անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ ծանուցվելուց հետո՝ «Քարավան» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Մասնավորապես՝ «Քարավան» ՍՊԸ-ն գրությամբ հայտնել է, որ վերջինս օրենքով սահմանված կարգով ունի շինարարության իրականացման գործունեության համապատասխան լիցենզիա, որը տրվել է Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կողմից: Նշված գրությամբ Կազմակերպությունը վկայակոչել է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6.1-րդ մասը և հայտնել, որ Կազմակերպության մասնակցությունը Ընթացակարգին բխում է ՀՀ օրենքների պահանջներից:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Քարավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի կարող գնահատվել հրավերի պահանջներին համապատասխանող և բավարար, քանի որ Կազմակերպությունը չի ներկայացրել մի փաստաթուղթ, որը համաձայն թե Կարգի և թե հրավերի, պետք է ներկայացվեր հայտով:

Ընդ որում՝ Կարգի 40-րդ կետը սահմանում է, որ հայտերի բացման նիստում հանձնաժողովը գնահատում է բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

Ընթացակարգի հրավերի համաձայն՝ բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հետևաբար, հաշվի առնելով վերոգրյալը՝ արձանագրում եմ, որ «Քարավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի բավարարում հրավերի պահանջներին, ուստի վերջինս չի կարող ճանաչվել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ինչ վերաբերում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սույն հարցի վերաբերյալ արտահայտված դիրքորոշմանը, որի համաձայն օտարերկրյա պետության տարածքում տրված լիցենզիան ՀՀ տարածքում կիառելու թույլտվություն ստանալու ընթացակարգը պետք է նախաձեռնել «Քարավան» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և

պայմանագիր կնքելու դեպքում՝ աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգելով ՀՀ կառավարության որոշումն ընդունելու համար դիմելու և ընդունվելու միջև ընկած ժամկետով, գտնում եմ, որ նման կարգավորումը չի կարող համարվել ընդունելի, քանի որ փաստացի ստացվում է մի իրավիճակ, երբ ընթացակարգի արդյունքում պայմանագիր է կնքում մի մասնակցի հետ, ով «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու իրավունք չունի, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Հետևաբար «Քարավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ոչ միայն չի կարող գնահատվել հրավերի պահանջներին համապատասխանող, այլև նաև վերջինս չի կարող համարվել առաջին տեղ զբաղեցրած, իսկ այնուհետև նաև ընտրված ճանաչված մասնակից:

Այս առումով գտնում եմ, որ «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ի բողոքով ներկայացված պահանջը՝ «Քարավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի պահանջներին համապատասխանող գնահատելու և վերջինիս ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումները դադարեցնելու մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ին Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելուն գնահատող հանձնաժողովին պարտավորեցնելու վերաբերյալ պահանջին, գտնում եմ, որ այն ենթակա է մերժման, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովն է որոշում գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):

Դրա հետ մեկտեղ սույն բողոքի շրջանակներում քննարկման առարկա է հանդիսացել «Քարավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ի հայտը չի քննարկվել Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից, հետևաբար և չի կարող որոշվել նաև Ընկերության՝ Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ

զբաղեցրած մասնակից ճանաչվելու հարցը, որը տվյալ դեպքում վերապահված է գնահատող հանձնաժողովին:

Այսպիսով հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է մասնակի բավարարման, իսկ «Քարավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ի կողմից 19.10.2018թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

- Պարտավորեցնել «ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/20Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Քարավան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի պահանջներին համապատասխանող գնահատելու և «Քարավան» ՍՊԸ-ին Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումը:
- «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ին Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելուն գնահատող հանձնաժողովին պարտավորեցնելու պահանջի մասով բողոքը մերժել:

2. «Քարավան» ՍՊԸ-ի կողմից 27.10.2018թ. ներկայացված համանման բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ